

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-825-28.12.2020-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՑԱՑՎԱԾ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
--	--	--	---	--	---

<p>Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան</p>	<p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-825-28.12.2020-ՊԻ- 011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</p>	<p>Առաջարկվել է նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p> <p><b>Հոդված 1.</b> Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 128-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի «Ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան» բառերը փոխարինել «Ձերբակալումն անձին» բառերով. 2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել. 3) 3-րդ մասի 2-րդ կետի «քրեական հետապնդման մարմնի» բառերը փոխարինել «քննիչի» բառով:</p> <p><b>Հոդված 2.</b> Օրենսգրքի 130-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <b>«Հոդված 130. Ձերբակալումն ազատության մեջ գտնվող</b></p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
---	---	--	---------------------	---------------------

		<p><b>մեղադրյալին դատարան ներկայացնելու համար</b></p> <p>1. Ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումն որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում՝ քննիչն որոշում է կայացնում մեղադրյալին ձերբակալելու մասին: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառը, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:</p> <p>2. Մեղադրյալին սույն հոդվածով նախատեսված հիմքով կարելի է ձերբակալել միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:</p> <p>3. Հետաքննության մարմնի աշխատակիցը մեղադրյալին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Արգելանքի վերցնելուց անմիջապես հետո մեղադրյալը բերվում է քննիչի</p>		
--	--	---	--	--

		<p>մոտ: Մեղադրյալին քննիչի մոտ բերելու փաստն ամրագրվում է անձի ձեռքակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են՝ մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, նրան արգելանքի վերցնելու տարին, ամիսը, օրը, ժամը, ընկերությունը, վայրը, պայմանները և հիմքերը, ձեռքակալում իրականացրած հետաքննության մարմնի աշխատակցի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձեռքակալված մեղադրյալի հայտարարությունները, ձեռքակալված մեղադրյալին քննիչի մոտ բերելու և արձանագրություն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը և ընկերությունը:</p> <p>4. Ձեռքակալման որոշմանը, որպես դրա բաղկացուցիչ մաս, կցվում է ձեռքակալման արձանագրությունը: Ձեռքակալման որոշման և ձեռքակալման արձանագրության պատճեններն անհապաղ ուղարկվում են հսկող դատախազին:</p> <p>5. Մույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձեռքակալումը չի կարող տևել 36 ժամից ավելի: Նշված հիմքով ձեռքակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան արգելանքի վերցնելու</p>		
--	--	---	--	--

		<p>պահից 18 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:</p> <p>6. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալն արգելանքի վերցնելու պահից 36 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:»:</p> <p><b>Հոդված 3.</b> Օրենսգրքի 131-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <b>«Հոդված 131. Խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալումը</b></p> <p>1. Եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, քննիչը որոշում է կայացնում նրան ձերբակալելու մասին՝ միաժամանակ մեղադրյալի կալանավորման մասին միջնորդություն ներկայացնելով դատարան: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառը, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման</p>		
--	--	--	--	--

		<p>իրականացումը:</p> <p>2. Մեղադրյալին սույն հոդվածով նախատեսված հիմքով կարելի է ձերբակալել միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:</p> <p>3. Հետաքննության մարմնի աշխատակիցը մեղադրյալին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Արգելանքի վերցնելուց անմիջապես հետո մեղադրյալը բերվում է քննիչի մոտ: Մեղադրյալին քննիչի մոտ բերելու փաստն ամրագրվում է անձի ձերբակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են՝ մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, նրան արգելանքի վերցնելու տարին, ամիսը, օրը, ժամը, ընդհանուր, վայրը, պայմանները և հիմքերը, ձերբակալում իրականացրած հետաքննության մարմնի աշխատակցի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձերբակալված մեղադրյալի հայտարարությունները, ձերբակալված մեղադրյալին քննիչի մոտ բերելու և</p>		
--	--	---	--	--

		<p>արձանագրություն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:</p> <p>4. Ձերբակալման որոշմանը, որպես դրա բաղկացուցիչ մաս, կցվում է ձերբակալման արձանագրությունը: Ձերբակալման որոշման և ձերբակալման արձանագրության պատճեններն անհապաղ ուղարկվում են հսկող դատախազին:</p> <p>5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 36 ժամից ավելի: Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան արգելանքի վերցնելու պահից 18 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:</p> <p>6. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալն արգելանքի վերցնելու պահից 36 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:»:</p> <p><b>Հոդված 4.</b> Օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունից</p>		
--	--	--	--	--

		<p>հանել «ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ» բառերը:</p> <p><b>Հոդված 5.</b> Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:</p>		
--	--	---	--	--



<p>Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան</p>	<p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-825-28.12.2020-ՊԻ- 011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հիմնավորում</p>	<p>Առաջարկվել է հիմնավորումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <b>1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</b> Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17-րդ գլխով նախատեսված են անձի ձերբակալման ընթացակարգը, նպատակները, հիմքերը, ձերբակալված անձին պահելու և ազատելու պայմանները: Ձերբակալումն Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է որպես անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելը, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար: Միաժամանակ, Օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում են ձերբակալման տեսակները, այն է՝ ձերբակալումը հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
---	---	--	---------------------	---------------------

		<p>հիման վրա և քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:</p> <p>Ձերբակալման հասկացության վերլուծությունից բխում է, որ գործող Օրենսգրքի համաձայն՝ անձին ձերբակալելու համար բոլոր դեպքերում պահանջվում է <i>հանցագործության կատարումը կամ հանցանք կատարելուց հետո փախուստը կանխելու նպատակի առկայությունը</i>:</p> <p>Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով թվարկվում են այն դեպքերը, որոնց առկայության պարագայում անձը կարող է զրկվել անձնական ազատությունից, և, ի թիվս այլնի, սահմանվում է, որ <i>անձը կարող է զրկվել անձնական ազատությունից վերջինիս իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով</i>:</p> <p>Հաշվի առնելով, որ նկարագրված հանգամանքները միմյանցից տարանջատված են «կամ» շաղկապով՝</p>		
--	--	---	--	--

		<p>կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր հանգամանքն անձին ազատությունից զրկելու ինքնուրույն հիմք է, և վերջիններիս միաժամանակյա առկայությունը պարտադիր չէ:</p> <p>Ասվածը բխում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայից (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքից:</p> <p>Այսպես, Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել անձնական ազատությունից բացառությամբ Եվրոպական կոնվենցիայով սահմանված դեպքերում և օրենքով սահմանված կարգով: Հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ անձը կարող է ձերբակալվել կամ կալանավորվել վերջինիս իրավասու մարմին ներկայացնելու նպատակով՝ ա) հանցավոր արարք կատարելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, կամ բ) երբ դա հիմնավոր</p>		
--	--	---	--	--

		<p>կերպով անհրաժեշտ է համարվում անձի կողմից հանցանք կատարելը կամ</p> <p>զ) հանցանք կատարելուց հետո փախուստը կանխելու համար:</p> <p>Մի շարք գործերով Եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով ամրագրված հիմքերն անձին ազատությունից զրկելու ինքնուրույն նախապայմաններ են: Նման պայմաններում, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձերբակալման բոլոր տեսակների դեպքում անձի կողմից հանցագործության կատարումը կամ հանցանք կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակի առկայությունը պարտադիր չէ:</p> <p>Վերոգրյալի հետ մեկտեղ, Օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված է քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա անձի ձերբակալման տեսակը, որի համաձայն՝ եթե քրեական գործով հավաքված ապացույցները հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, ընդ որում, նա գտնվում է այլ</p>		
--	--	---	--	--

		<p>տեղանքում կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, քրեական հետապնդման մարմինն իրավունք ունի որոշում կայացնել այդ անձին ձերբակալելու մասին:</p> <p>Հարկ է նկատել, որ Օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված ձերբակալման տեսակը գործող խմբագրությամբ որոշակի չէ և պարունակում է խնդրահարույց տարրեր: Այսպես, քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարման մասին վկայող ապացույցների համակցության դեպքում, երբ անձի գտնվելու վայրը հայտնի չէ վարույթն իրականացնող մարմնին, քրեադատավարական այլ գործիքակազմի կիրառմամբ հնարավոր է պարզել այն: Ուստի, անհրաժեշտ է որոշակիացնել ձերբակալման նշված տեսակի կիրառման պայմանները՝ դրանք պայմանավորելով անձին դատարան ներկայացնելու անհրաժեշտության հետ: Ընդ որում, անձին դատարան ներկայացնելու հետապնդվող նպատակի հաշվառմամբ, նկատի ունենալով ձերբակալման նշված տեսակի խիստ կարճաժամկետ բնույթը, պետք է նաև</p>		
--	--	---	--	--

		<p>սահմանել անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված հստակ ընթացակարգային իրավական երաշխիքներ:</p> <p>Միննույն ժամանակ, խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալման դեպքում ևս, համանման կերպով, հաշվի առնելով անձին դատարան ներկայացնելու նպատակը և դրանով պայմանավորված՝ ձերբակալման նշված տեսակի խիստ կարճաժամկետ բնույթը, պետք է սահմանել անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված հստակ ընթացակարգային իրավական երաշխիքներ:</p> <p><b>2. Առաջարկվող կարգավորման բնույթը</b> Նախագծով առաջարկվում է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ձերբակալման հասկացությունը սահմանող 128-րդ հոդվածի 1-ին մասում հրաժարվել ձերբակալման նպատակներից,</li> <li>2) վերաշարադրել 130-րդ հոդվածով սահմանված ձերբակալման տեսակը՝ ամրագրելով այն որպես ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալում: Հաշվի առնելով</li> </ol>		
--	--	---	--	--

		<p>ձերբակալման այս տեսակին բնորոշ առանձնահատկությունները, ի թիվս ընթացակարգային այլ պահանջների, առաջարկվում է նաև սահմանել, որ սույն հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 36 ժամից ավելի,</p> <p>3) վերաշարադրել Օրենսգրքի 131-րդ հոդվածը՝ հստակեցնելով խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալման կարգը: Միաժամանակ, ձերբակալման այս տեսակի դեպքում ևս, հաշվի առնելով բնորոշ առանձնահատկությունները, ի թիվս ընթացակարգային այլ պահանջների, առաջարկվում է սահմանել, որ սույն հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 36 ժամից ավելի:</p> <p><b>3. Ակնկալվող արդյունքը</b></p> <p>Նախագծի ընդունմամբ Օրենսգրքի 17-րդ գլխով նախատեսված ձերբակալման կարգը և տեսակները կհամապատասխանեցվեն ՀՀ Սահմանադրության 27-րդ և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածներով, Եվրոպական դատարանի նախադեպային</p>		
--	--	--	--	--

		<p>իրավունքով սահմանված պահանջներին: Միննույն ժամանակ, անձին ձերբակալելիս կսահմանվեն անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված հստակ ընթացակարգային կարգավորումներ և կամրապնդվեն անձի ազատության իրավունքի պաշտպանության երաշխիքները:</p>		
--	--	--	--	--